ԿՐԵՄԼԻ
ԱՄԲՈՂՋ ՇՔԱԽՈՒՄԲԸ

BookMark

Михаил Зыгарь

ВСЯ КРЕМЛЕВСКАЯ РАТЬ

Краткая история современной России

BookMark

Միխայիլ Զիգար

ԿՐԵՄԼԻ ԱՄԲՈՂՋ ՇՔԱԽՈՒՄԸ

Ժամանակակից Ռուսաստանի համառոտ պատմությունը

Թարգմանությունը ռուսերենից՝
Դավիթ Սարգսյանի

ԵՐԵՎԱՆ
2021

BookMark

ՀՏԴ 94(470+571)
ԳՄԴ 63.3(2)6
Զ 592

Զիգար Միխայիլ
Զ 592 Կրեմլի ամբողջ շքախումբը: Ժամանակակից Ռուսաստանի համառոտ պատմությունը / Մ. Զիգար; Թարգմանությունը ռուսերենից՝ Դ. Սարգսյանի.- Եր.: Newmag, 2021.- 468 էջ:

Այս գիրքը ներկայացնում է Ռուսաստանի ժամանակակից պատմությունը՝ Վլադիմիր Պուտինի կառավարման շրջանը (2000-15): Գրքի հիմքում փաստաթղթեր են, բաց աղբյուրներ ու տասնյակ բացառիկ հարցազրույցներ: Մեկտեղված փաստերի, իրադարձությունների, ինտրիգների ու հերոսների կարծիքների շնորհիվ լիարժեք է դառնում Կրեմլի ներքին կյանքի պատկերը, պարզ է դառնում Վլադիմիր Պուտինի կառավարման տրամաբանությունը: Գրքում հավաքված են բացառիկ, նախկինում չհրապարակված փաստեր, հարցազրույցներ Վլադիմիր Պուտինի մերձավորների հետ, ինչը հնարավորություն է տալիս բացահայտումներ անել Ռուսաստանի նախագահի կայացրած որոշումների իրական պատճառների մասին:

ՀՏԴ 94(470+571)
ԳՄԴ 63.3(2)6

BOOKMARK

ISBN 978-9939-884-27-1
All The Kremlin's Men © 2015 by Mikhail Zygar
Вся кремлевская рать ©2015 Михаил Зыгарь
Կրեմլի ամբողջ շքախումբը © 2021, «Նյու Մեգ» ՍՊԸ

Այս գրքի հրատարակման բոլոր իրավունքները պատկանում են «Օրակուլ» և «Նյումեգ» ընկերություններին: Համաձայն կնքված պայմանագրի՝ «Օրակուլ» հրատարակչության գրքերը ներկայացված են որպես «Նյու Մեգ» ընկերության «Օրակուլ» հայ-ռուսական մատենաշար: Գրքի հայերեն թարգմանության և հրատարակման իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքած պայմանագրով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ՄԱՍ 1 \\ ՊՈՒՏԻՆ 1-Ի ԱՌՅՈՒԾԱՍԻՐՏԸ

ԳԼՈՒԽ 1 *Որում Կրեմլի գաղափարախոս Ալեքսանդր Վոլոշինը սովորեց հանդուրժել Լենինին* 13

ԳԼՈՒԽ 2 *Որտեղ քաղտարագիր Բորիս Բերեզովսկուն չհրավիրեցին թագավորական հարսանիքին* 41

ԳԼՈՒԽ 3 *Որում Ռուսաստանի ամենահարուստ մարդը՝ Միխայիլ Խոդորկովսկին, կորցնում է բիզնեսն ու ազատությունը, իսկ Ընտանիքն անհետանում է* 75

ՄԱՍ 2 \\ ՊՈՒՏԻՆ 2-ՐԴ ՀՐԱՇԱԼԻՆ

ԳԼՈՒԽ 4 *Որում կրեմլյան վարչակազմի ղեկավար Դմիտրի Մեդվեդևն ստեղծեց ռուսաստանյան նոր խավ* 105

ԳԼՈՒԽ 5 *Որում Ուկրաինայի նախագահի աշխատակազմի ղեկավար Վիկտոր Մեդվեդչուկը դարձավ վերջին ուկրաինացին, ում հավատում է Պուտինը* 123

ԳԼՈՒԽ 6 *Որում նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վլադիսլավ Սուրկովը պաշտպանում է պաշարված Կրեմլը* 141

ԳԼՈՒԽ 7 *Որում նախագահի օգնական Իգոր Շուվալովը հնարում է թե ինչպես Ռուսաստանը դարձնել կայսրություն* 167

ԳԼՈՒԽ 8 *Որում փոխվարչապետ Սերգեյ Իվանովը լրջորեն հավատաց, որ ժառանգորդն ինքն է* 183

ՄԱՍ 3 \\ ԿԵՂԾ ԴՄԻՏՐԻ ԱՐՔԱՅՈՐԴԻՆ

ԳԼՈՒԽ 9 *Որում Վրաստանի նախագահ Միխայիլ Սաակաշվիլին հաջողում է պահպանել ոչ միայն իշխանությունը, այլև մի շատ ավելի թանկ բան* 211

BookMark

ԳԼՈՒԽ 10 *Որում Բարաք Օբաման դարձավ Կրեմլի լավագույն ընկերն ու գլխավոր թշնամին* 237

ԳԼՈՒԽ 11 *Որում փոխվարչապետ Իգոր Սեչինը դարձավ ռուսական Չե Գևարա* 247

ԳԼՈՒԽ 12 *Որում ռուս արքայադուստր Տատյանա Յումաշևան հնարում է նոր ժողովրդավարական կուսակցություն* 265

ԳԼՈՒԽ 13 *Որում ընդդիմության առաջնորդ Ալեքսեյ Նավալնին զգաց, որ կարող է մարդկանց տանել Կրեմլի վրա* 289

ՄԱՍ 4 \\ ՊՈՒՏԻՆ 3-ՐԴ ԱՀԵՂԸ

ԳԼՈՒԽ 14 *Որում պատրիարք Կիրիլն սկսեց ղեկավարել նախարարներին* 319

ԳԼՈՒԽ 15 *Որում կրեմլյան գաղափարախոս Վյաչեսլավ Վոլոդինը հայտնագործեց ազգային նոր գաղափար* 333

ԳԼՈՒԽ 16 *Որում Պուտինի մամուլի խոսնակ Դմիտրի Պեսկովը հասկացավ, որ Արևմուտքին դուր գալ այլևս երբեք չի հաջողվի* 353

ԳԼՈՒԽ 17 *Որում պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն վրեժ լուծեց Աֆղանստանի ու Նիկոլայ 1-ինի համար* 379

ԳԼՈՒԽ 18 *Որում Ալեքսեյ Կուդրինը պարտվեց նախագահի գլխում տեղ ունենալու մարտը* 407

ԳԼՈՒԽ 19 *Որում Ռամզան Կադիրովը մեկնեց Դուբայ ու վերադարձավ* 431

ՎԵՐՋԱԲԱՆ \\ ՊՈՒՏԻՆ 4-ՐԴ ՍՈՒՐԲԸ 453

Book mark

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սկսելով աշխատանքը գրքի վրա՝ կարծում էի, որ այն կլինի պատմություն այն մասին, թե ինչ տեղի ունեցավ Ռուսաստանի հետ անցած 15 տարիներին, ինչպես էին փոխվում Վլադիմիր Պուտինի և նրա մերձավոր շրջապատի աշխարհընկալումն ու աշխարհայացքը, ինչպես էր ամեն ինչ սկսվում, և ինչի հանգեցրեց այդ ամենը: Բայց պարզվեց, որ իրադարձությունների մասնակիցները երբեք չեն հիշում, թե ինչ է տեղի ունեցել իրականում: Յուրաքանչյուրն իր հիշողությունը կառուցում է այնպես, որ ինքը դրանում երևա արժանապատիվ, հերոսական և ամենակարևորը՝ միշտ լինի ճիշտ: Տարիների աշխատանքի ընթացքում տասնյակ հարցազրույցներ եմ վերցրել Վլադիմիր Պուտինի մերձավոր շրջապատից՝ Կրեմլի աշխատակազմի ծառայողներից, կառավարության անդամներից, Պետդումայի պատգամավորներից, Forbes-ի ցուցակի գործարարներից ու արտասահմանյան քաղաքական գործիչներից: Նրանցից գրեթե յուրաքանչյուրը պատմում էր պատմություն, որը երբեմն չէր համընկնում մյուսների պատմածի հետ: Հերոսները հաճախ մոռանում էին փաստերը, շփոթում էին ժամանակը և նույնիսկ չէին կարողանում հիշել սեփական արարքներն ու խոսքերը: Որպես կանոն՝ նրանք խնդրում էին իրենց խոսքին հղում չանել: Ամեն դեպքում ես հաջողացրի հարցուփորձ անել այդ իրադարձությունների այնպիսի մեծ թվով մասնակիցների, որ պատկերը բավականաչափ պարզ է:

Արդյունքում ստացվել է պատմություն այն մասին, թե ինչպես է մարդը պատահաբար դարձել թագավոր: Սկզբում նա պարզապես ուզում էր

պահպանել իր դիրքը: Նրա բախտն սկսում է բերել, և նա որոշում է, որ կարող է դառնալ հաջողակ մարտիկ ու բարեփոխիչ՝ Առյուծասիրտ արքա: Եվ ցանկանում է պատմության մեջ մտնել: Բայց հետո ցանկանում է լավ կյանք: Եվ դառնում է արքա Հրաշալի: Հետո հոգնում է ու ցանկանում հանգստանալ: Բայց հասկանում է, որ արդեն չի կարող իրեն հանգիստ թույլ տալ, քանի որ արդեն պատմության մաս է: Քանի որ արդեն արքա Ահեղ է:

Ինչպե՞ս էին տեղի ունենում նրա բոլոր այս փոփոխությունները: Մեծամասամբ իր շրջապատի շնորհիվ՝ բազմատարր շքախմբի, որն այս ամբողջ տարիների ընթացքում եռանդով թագավոր էր խաղում: Մերձավոր շրջապատը միացավ դրան և, խաղարկելով վախերն ու հղձերը, տարավ առաջ: Այնտեղ, որտեղ նա չէր էլ պատկերացնում, որ մի օր կհայտնվեր:

Եթե վերականգնենք իրադարձությունները՝ իմանալով, թե ինչպես են դրանք ավարտվել, պատմությունը կթվա շատ տրամաբանական: Նույնիսկ կարող է թվալ, որ հենց սկզբից ամեն բան շարժվում էր հենց այնտեղ, որտեղ հիմա է, ուրվագծվում է ի սկզբանե գոյություն ունեցող որոշակի ծրագիր: Հերոսները հետին թվով հորինում են սեփական գործողությունների հիմնավորումներ: Գտնում են պատճառներ, որոնք իրականում գոյություն չեն ունեցել, և տրամաբանություն, որի մասին նախկինում չեն էլ ենթադրել:

Սակայն Ռուսաստանի պատմության այս 15 տարիները, նույնիսկ մի փոքր էլ ավելին, չունեն հստակ տրամաբանություն: Իրադարձությունների շղթան, որը ես հաջողացրել եմ վերականգնել, ի ցույց է դնում Պուտինի ու նրա շրջապատի ծրագրի կամ հստակ ռազմավարության բացակայությունը: Բոլոր քայլերը տակտիկական են, օպերատիվ արձագանք արտաքին ազդակներին, որոնք ոչ մի վերջնական նպատակակետի չեն տանում:

Ռուսաստանյան քաղաքական գործիչների վերջին 15 տարիների քայլերի ու դրանց դրդապատճառների ակնդետ ուսումնասիրությունն ապացուցում է, որ դավադրության տեսությունը ճիշտ չէ: Եթե կա նվազագույն կասկած, թե որն է այս կամ այն իրադարձության պատճառը՝ չար դիտավորությո՞ւնը, թե՞ սխալը, ապա միշտ պետք է ընտրել երկրորդը:

Ռուսաստանցի կառավարիչները 2000 թվականին գիտեի՞ն, թե ինչի կհասնեն իրենք 15 տարի կառավարելուց հետո: Ո՛չ: 2014 թվականին գիտեի՞ն, թե ինչպես են դիմավորելու 2015 թվականը: Նույնպես՝ ո՛չ:

Երբ գրում եմ «կառավարիչներ» հոգնակի թվով, բոլորովին էլ սխալ չէ: Ընդունված է համարել, որ Ռուսաստանում բոլոր որոշումները կայացնում է մեկ մարդ՝ Վլադիմիր Պուտինը: Դա ճիշտ է միայն մասամբ: Բոլոր որոշումներն իսկապես ընդունում է Պուտինը, բայց Պուտինը մեկ մարդ չէ: Դա հսկայական հավաքական բանականություն է: Տասնյակ, եթե ոչ հարյուրավոր մարդիկ ամեն օր գուշակում են, թե ինչ որոշումներ պետք է ընդունի Վլադիմիր Պուտինը: Ինքը՝ Վլադիմիր Պուտինը, շարունակ գուշակում է, թե ինչ որոշումներ ինքը պետք է ընդունի, որպեսզի ժողովրդականություն ունենա, հասկանալի լինի հսկայական, հավաքական Վլադիմիր Պուտինի համար ու արժանանա նրա հավանությանը:

Այս հավաքական Վլադիմիր Պուտինը բոլոր տարիներին կառուցում էր իր հիշողություններն այնպես, որ ինքն իրեն ապացուցի սեփական ճշմարտացիությունը, որ ինքն իրեն համոզի, որ իր գործողությունները տրամաբանական են, որ ունի ծրագիր ու ռազմավարություն, որ ինքը սխալներ չի արել, այլ ստիպված է եղել այդպես գործել, քանի որ պայքարում էր թշնամիների դեմ, վարում էր ծանր ու չընդհատվող պատերազմ:

Դրա համար էլ իմ գիրքը երևակայական պատերազմի պատմություն է: Պատերազմ, որն անհնար է ավարտել, այլապես ստիպված պետք է ընդունել, որ այն երբեք էլ չի եղել:

BookMark

ՄԱՍ 1

ՊՈՒՏԻՆ 1-ԻՆ ԱՌՅՈՒԾԱՍԻՐՏԸ

BookMark

ԳԼՈՒԽ 1

ՈՐՈՒՄ ԿՐԵՄԼԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎՈԼՈՇԻՆԸ ՍՈՎՈՐԵՑ ՀԱՆԴՈՒՐԺԵԼ ԼԵՆԻՆԻՆ

Ալեքսանդր Վոլոշին. օրինակելի կապիտալիստ: Արտաքնապես հիշեցնում է ամերիկյան Քեռի Սեմին՝ ինչպիսին նրան պատկերում էին խորհրդային ծաղրանկարներում. ճերմակած, կարճ մորուք, խորաթափանց սառը հայացք (կերպարն ամբողջացնելու համար պակասում է միայն կոտելոկ-գլխարկ, դոլարի պարկ և ռումբ՝ մեջքի հետևում):

Վոլոշինի գրասենյակը Մոսկվայի կենտրոնում է՝ Պոլյանկայում, Կրեմլից ոտքով 10 րոպե հեռավորության վրա, ասկետիկ գրասենյակ, որտեղ կա անհրաժեշտ ամեն բան, բայց ոչ մի շքեղություն. աշխարհի գաղտնի տիրակալին դա պետք չէ:

Վոլոշինն ակնհայտ հակահռետոր է, խոսում է ցածր ու նույնիսկ փոքր-ինչ կակազում զայրույթի պահին: Նաև սիրում է չարաշահել անգլերեն բառերը: Ու ոչ թե անգլիցիզմները, այլ հենց օտար բառերը, որոնք կիրառում է աշխատանքային կյանքում: «Ուկրաինայում վիճակն արդեն այդքան էլ manageable չէ»: «Անհրաժեշտ է, որպեսզի գլխում միշտ լինի agenda»: «Վրա հասավ լիակատար deadlock»: «Կարևոր են հիմնական stakeholder-ների կարծիքները»: Նա այդպես է խոսում ոչ թե դիտավորյալ, այլ որովհետև այդպես հեշտ է, չէ՞ որ նա գործարար է, այլ ոչ քաղաքական գործիչ:

Իր պատմական գլխավոր առաքելությունը Վոլոշինը, ենթադրաբար, համարում է ավարտված. նա ապահովեց քաղաքական կայունություն և կապիտալիզմ ու գնաց հանգստի: Նա ասում է, որ չի զղջում քաղաքականության վրա ազդել չկարողանալու իր ներկայիս կարգավիճակի համար:

Քաղաքականության մասին նախընտրում է խոսել բացառապես գործնական տերմինաբանությամբ. «Ամերիկացիներն իրենց մոտ ստեղծել են հսկայական, տարբերակված, նորարարությունների ձգտող տնտեսություն՝ կապիտալի մրցակցության շնորհիվ: Նույնքան լարված մրցակցություն է նկատվում նաև ամերիկյան քաղաքական դաշտում, այդ թվում՝ քաղաքական հիմնական կուսակցությունների ներսում: Դրա շնորհիվ նրանք ձևավորել են քաղաքական կայուն համակարգ, որը դուրս է մղում ծայրահեղությունները: Իսկ միջազգային քաղաքականության մեջ Միացյալ Նահանգները ԽՍՀՄ փլուզումից հետո դարձավ դե ֆակտո մոնոպոլիստ: Եվ մրցակցության բացակայության պայմաններում նրանք դարձան ինքնավստահ, անարդյունավետ, ոչ բանական: Մի շարք լրջագույն սխալներ գործեցին, հսկայական վնաս հասցրին միջազգային անվտանգությանն ու հենց իրենք իրենց»: Չնայած Ամերիկայի մասին նա խոսում է կարգին քննադատությամբ, ամեն դեպքում՝ որոշակի սիրով և անսպասելի մանրամասներով. այնտեղ նա պատահաբար ծանոթացել է Ջեբ Բուշի հետ, իսկ այստեղ տեսել հին ծանոթներից մեկին՝ Կոնդոլիզա Ռայսին, բայց որոշել է չբարևել:

Իրական ցասում է նրա մեջ առաջացնում ուկրաինական խնդիրը. այստեղ նա անգլերենից անցնում է ռուսերենի: Ռուսախոս բնակչության նկատմամբ ուկրաինական իշխանության քաղաքականությունը նրան վրդովեցնում է. «Եթե կանադացիները փորձեին իրենց այդպես պահել Քվեբեկի ֆրանսախոս բնակչության հանդեպ, շատ ավելի կոշտ պատասխան կստանային»:

Թաղել Լենինին

1999 թվականին Կրեմլում կազմեցին Լենինին թաղելու հստակ ծրագիր: Ենթադրվում էր խուլ գիշերը նրա մարմինը Դամբարանից հանել Կարմիր հրապարակ ու տեղափոխել Սանկտ Պետերբուրգ՝ գերգաղտնիության պայմաններում: Առավոտյան բոլորը կարթնանային, իսկ Լենինն արդեն Կարմիր հրապարակում չէր լինի: Ճիշտ այդպես դրանից 38 տարի առաջ՝ աշնանային ուշ գիշերը Դամբարանից հանեցին Ստալինի դին, թեև նրան շատ հեռու չտարան, թաղեցին Կրեմլի պատի տակ: Այդ ժամանակվա սովետական առաջնորդ Նիկիտա Խրուշչովի համար դա ապաստալինացման և անձի պաշտամունքը հոդս ցնդեցնելու խորհրդանշական ակտ էր:

Կրեմլի վարչակազմի ներկայացուցիչները հիշում են, որ Լենինի վերահուղարկավորությունը պետք է տեղի ունենար «արժանապատիվ ու առանց գռեհկության»: Պարզապես դրանից հետո պետք էր լինելու մեկ-երկու ամիս շրջապատել Սանկտ Պետերբուրգի Վոլկովսկոյե գերեզմանատունը (որտեղ թաղված են Լենինի մայրն ու քույրը, և որտեղ, ըստ լեգենդի, պատգամել էր իրեն թաղել Սովետական պետության հիմնադիրը): Եվ պետք էր մի քանի ամիս դիմանալ կոմունիստների բողոքի ցույցերին: Դրանից հետո կրքերը կհանդարտվեին. ծրագրվում էր ապամոնտաժել Դամբարանը և այդ տեղում կառուցել բռնատիրության զոհերի հիշատակին նվիրված հուշարձան, որպեսզի հետագայում որևէ մեկը չհամարձակվեր այն քանդել: Դա պետք է լիներ վճռական հարված կոմունիստական գաղափարախոսությանը: Այդ ժամանակ Կրեմլի համար դա կարևորագույն խնդիր էր. թույլ չտալ սովետական ռևանշ ու հաղթել կոմունիստներին:

Կրեմլի վարչակազմի ղեկավար Ալեքսանդր Վոլոշինի աշխատասենյակը Դամբարանում հանգչող Լենինի քարադագաղից մոտ 10-15 մետր հեռավորության վրա էր: Պատմում են, որ Վոլոշինը սիրում էր կատակել. «Ուղիղ գծով ինձնից մինչև դիակ 15 մետր է: Նա այնտեղ պառկած է, ես այստեղ աշխատում եմ: Մենք միմյանց չենք խանգարում»:

Իրականում, սակայն, Լենինը շատ էր խանգարում: Նախագահ Բորիս Ելցինին նա խանգարում էր անցյալին վերջ տալու համար: Լենինին թաղելը կխորհրդանշեր, որ եկել են նոր ժամանակներ և տեղի ունեցած փոփոխություններն անշրջելի են, ինչպես Ստալինին հողին հանձնելը Խրուշչովի համար 36 տարի դրանից առաջ: Լենինին թաղել առաջին անգամ առաջարկել էր Պետերբուրգի առաջին քաղաքապետ Անատոլի Սոբչակը 1991 թվականին, բայց և՛ այն ժամանակ, և՛ հաջորդող տարիներին Ելցինը չէր կարող կատարել նրա խնդրանքը. չէր ուզում գնալ անհարկի առճակատման կոմունիստների հետ:

Իսկ Վոլոշինի համար Լենինը ոչ այնքան խորհրդանիշ էր, որքան կոնկրետ, մշտապես կենդանի խաղացող գործող քաղաքականության մեջ: Կոմունիստական կուսակցության դեմ պայքարը Կրեմլի գլխավոր ռազմավարագետի ամենօրյա հոգսերի կարևորագույն մասն էր: Լենինը նրա ձեռքին հաղթաթուղթ էր, հակառակորդին շառաչուն հարված հասցնելու հնարավորություն: Կոմունիստները դարձել էին գլխավոր ուժը